

ԲՆԱԳՐԵՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ՝ ԳԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ «ԲԱՐՁՐԱՑՈՒՅԷ»-Ի ՆՈՐԱՀԱՅՑ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

V-VI դդ. հայ աղանավոր փիլիսոփա-աստվածաբան Գավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկը («Բարձրացուցէք»), լինելով հայ մատենագրության մեջ Խաչին նվիրված հնագույն ստեղծագործությունը, մեծ ազդեցություն է ունեցել Հայոց եկեղեցու աստվածաբանական մտքի վրա: Այն ընդգրկված է եղել միջնադարյան Հայաստանի վարդապետարաններում ուսուցանվող երկերի շարքում¹: Հայ մեկնիչները, շարականագիրները, ճառերի և ներբողների հեղինակներն օգտվել են «Բարձրացուցէք»-ից՝ թե՛ աստվածաբանական, փիլիսոփայական և թե՛ զուտ բառային և լեզվական առումներով: Այս երկի և նրա հեղինակի հանդեպ հետաքրքրությունն աճեց հատկապես XII-XIII դդ., երբ ստեղծվեցին Ներբող-ի առանձին «պատճառ»-ները² և մեկնությունները:

¹ Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 33-34: Տե՛ս նաև՝ Լ. Խաչերյան, «Միջնադարի հայ մատենագիտության մի ֆանի հարցերի շուրջը», Բանբեր Մատենադարանի, Եր., 1971, թիվ 10, էջ 85-102, Է. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցի, Եր., 1985, էջ 204-221:

² Տե՛ս Ա. Մելիքյան, «Գավիթ Անհաղթ փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկի «Պատճառ»-ները», Պատմա-բանասիրական հանդես, 2013, թիվ 2 (193), էջ 202-214:

«Բարձրացուցէք»-ի հեղինակի, ստեղծման ժամանակի և պատմական միջավայրի մասին հիմնական տեղեկություններն ստանում ենք Ներբող-ի Նախադրությունից, Գյուտ Ա Արահեզացի (461-478) կաթողիկոսի և Դավիթ փրկիստփայի նամակներից, որոնք զետեղված են «Տօնապատճառ» ժողովածուում հաշի տոնի պատճառի մեջ³: Դժվար է միանշանակ ասել, թե Նախադրության, Գյուտի և Դավիթի նամակների մեզ հասած տարբերակները երբ և ում կողմից են գրվել: Այնուամենայնիվ, ելնելով ոճային, պատմական և այլ առանձնահատկություններից, հակված ենք կարծելու, որ դրանք ունեցել են ավելի վաղ շրջանում ստեղծված նախօրինակներ: Այս մասին պարզորոշ վկայում են նաև «Բարձրացուցէք»-ի «պատճառ»-ների հեղինակները: XII դարի մատենագիր Վարդան Հաղբատեցին, անդրադառնալով Ներբող-ի ստեղծման մասին միջնադարում տարածված կարծիքներին, գրում է. «այլ գտաք յարիինակս հինս առ թարգմանութիւն մերձ գրեալ»⁴, ինչը հուշում է, որ Ներբող-ի հնագույն օրինակները կից ինչ-որ «առաջաբան» կամ «նախադրություն» են ունեցել: Իսկ Դավիթ Անհաղթի՝ Գյուտ կաթողիկոսին ուղղված նամակի վերաբերյալ Դավիթ Քոբայրեցու (մոտ 1150-1220) «Որ եղեւ գրեալ յամենայն արիինակս»⁵ և Գրիգոր Աբասյանի (XII-XIII դդ.) «գտաք ի գիրս Թարգմանչացն ի սկիզբն այսր ճառիս»⁶ արտահայտությունները վկայում են, որ «Բարձրացուցէք»-ի հնագույն օրինակների սկզբում զետեղված է եղել նաև Դավիթի նամակը, որը նրանք մեջբերում են գրեթե ամբողջությամբ: Հետագայում դրանք կարող էին խմբագրվել ինչպես գրավոր աղբյուրների, այնպես էլ բանավոր ավանդության հիման վրա: Հնարավոր է, որ Նախադրությունը և նամակները վերակազմվել և ներկայիս տեսքն են ընդունել այն հեղինակի կողմից, ով ներմուծել է դրանք «Տօնապատճառ»-ի մեջ, ինչի մասին հուշում է դրանց՝ իմաստային առումով միմյանց կապված լինելը: Ինչպես օրինակ՝ Նախադրության վերջին նախադասությունը. «Իբրեւ լուա Գիւտ գգալն Դաւթի և զընկերացն, բերկրեցաւ և մխիթարեցաւ յոգի, և գրեաց առ Դաւիթ նամակ, որ ունէր օրինակ զայս», կամ Դավիթի նամակի «Ապա առնէ նմա անդրէն եւ անդրադարձ պատասխանի» սկզբնավորությունը:

«Տօնապատճառ» ժողովածուում նշյալ պատմական բնագրերին հաջորդում է Ներբող-ի՝ «Օրհնեալ ես» բառով սկսվող գոհաբանական մի հատվածի

³ Տե՛ս ՄՄ 3082, ք. 294բ-5բ, ՄՄ 4139, ք. 346ա-7ա, ՄՄ 2039, ք. 306բ-7բ, ՄՄ 3931, ք. 265բ-7բ:

⁴ Վարդան Արևելցի, ճառք, Ներբողեանք, աշխատասիրությամբ Հ. Հ. Քեոսեյանի, Եր., 2000, էջ 286:

⁵ Գ. Աղանեանց, «Հնից-Նորից (հնախօսական ուղեւորութիւն)», Լումայ, 1900, Տփլիս, քիւ Ա, էջ 254:

⁶ Մ. Է. Շիրինյան, «Հայոց գրերի գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի», էջմիածին, 2004, հուլիս-օգոստոս (Է-Ը), էջ 90:

մեկնությունը: Այս բնագիրն առաջին հայացքից թվում է, որ վերցված է ներսես Շնորհալու «Բարձրացուցէք»-ի ընդարձակ մեկնությունից: Սակայն, այն համեմատելով Շնորհալու մեկնությունը պարունակող Մաշտոցյան Մատենադարանի մի քանի ձեռագրերի, ինչպես նաև նույն երկի լատիներեն թարգմանության հետ⁷ նկատեցինք, որ «Տոնապատճառ»-ում խնդրո առարկա բնագիրն ավելի ընդարձակ է և տարբերվում է Շնորհալու նշյալ ստեղծագործությունից: Թեև «Տոնապատճառ»-ի խմբագիրը մի շարք հատվածներում բառացիորեն կրկնում է Շնորհալուն, սակայն որոշ դրույթներ ոչ միայն ավելի մանրամասն է ներկայացնում, այլև արտահայտում է միանգամայն տարբեր տեսակետներ: Ասվածն ավելի տեսանելի դարձնելու համար ներկայացնենք մեկ օրինակ: Դավիթ Անհաղթի «ի մտաւորաց և բանաւորաց կենդանեաց»⁸ արտահայտությունը ներսես Շնորհալին մեկնում է հետևյալ կերպ. «Մտաւոր և բանաւոր կոչին հրեշտակք, որ անմարմին են և մարդիկ մարմնաւորք»⁹: Այսինքն՝ նա թե՛ հրեշտակներին և թե՛ մարդկանց համարում է մտավոր և բանավոր, առաջիններին՝ անմարմին, իսկ վերջիններին՝ մարմնավոր: Մինչդեռ «Տոնապատճառ»-ի մեկնիչը մտավոր և բանավոր կենդանի ասելով հասկանում է բացառապես մարդուն. «Ոմանք մտաւոր զհրեշտակս և բանաւոր զմարդիք ասացին, այլ հրեշտակք բոլորովին միտք են շասին մտաւորք: ...այլ մտաւոր եւ բանաւոր կենդանի մարդս է»¹⁰:

Կարող ենք ասել, որ «Տոնապատճառ»-ի խմբագիրը ներսես Շնորհալու մեկնության հիման վրա գրել է «Բարձրացուցէք»-ի համապատասխան հատվածի մեկ այլ մեկնություն և զետեղել Խաչի առնի պատճառի մեջ: Մենք հակված ենք կարծելու, որ «Բարձրացուցէք»-ի Նախագրությունը, Դավիթի և Գյուլտ կաթողիկոսի նամակները «Տոնապատճառ»-ի մեջ ներմուծվել են Վարդան Հաղբատեցու և ներսես Շնորհալու մատենագրական համագործակցության արդյունքում, ինչը, սակայն չենք կարող ասել այս մեկնության մասին: Դժվար թե Վարդան Հաղբատեցին խմբագրեր, ձևափոխեր իր իսկ խնդրանքով ներսես Շնորհալու հեղինակած «Բարձրացուցէք»-ի մեկնությունը: Ավելորդ է ասել, որ վերջինս չէր կարող գրել միևնույն երկի տարբեր, երբեմն իրար հակասող մտքերով մեկնություններ:

Վարդան Հաղբատեցուց հետո «Տոնապատճառ»-ի հաջորդ խմբագրու-

⁷ ՄՄ 1460, ՄՄ 4253, ՄՄ 6816, *Sancti Nersetis Clajensis Armeniorum Catholici opera nunc primum ex Armenio in Latinum conversa notisque illustrata*, studio et Labore **D. Josephi Cappelletti**, Venetiis, typis PP. Mekhitaristarum, in insula S. Lazari, vol. II, 1833, 244-323:

⁸ Դավիթ Անհաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ թուղթ Գյուլտայ կաթողիկոսի առ Դավիթ, Վեներաբիլ, 1932, էջ 17:

⁹ ՄՄ 1460, ք. 35ա:

¹⁰ ՄՄ 4139, ք. 349ա:

թյունն իրականացրել է Վարդան Արևելցին¹¹, ով հայտնի է նաև բազմաթիվ մեկնողական երկերով: Մեր համոզմամբ հենց նա էլ հեղինակել է «Տոնապատճառ»-ում առկա «Բարձրացուցէք»-ի այս մեկնությունը: Ուշագրավ է, որ միջնադարյան մեկնիչների վերաբերյալ տեղեկություններ պարունակող ձեռագրերում Վարդան Արևելցու ստեղծագործությունների շարքում նշվում է նաև «Բարձրացուցէք»-ի մեկնությունը¹²:

Այսպիսով, միջնադարյան հայ մատենագրության ամենաբեղմնավոր հեղինակներից մեկի՝ Վարդան Արևելցու՝ մեզ հայտնի երկացանկին ավելացավ ևս մի մեկնություն: Հեղինակը մեկնել է «Բարձրացուցէք»-ի հետևյալ՝ «Օրհնեա՛լ ես, աստուածազարդ քրիստոսապասակեալ փայտ սուրբ, որ միայն յանշունչս և ի շնչաւորս, ի կենդանս և յանկենդանս անճառելոյ հասեալ շնորհի փառաւորեցար. վասն որոյ ի մտաւորաց եւ ի բանաւորաց կենդանեաց՝ զկամաւորն պահանջես զերկրպագութիւն» և «Օրհնեա՛լ ես քրիստոսապասակեալ փայտ սուրբ, որ յերկրի բուսանելով գերագոյն կամարարացն ծայր արձակեալ բարձրացար, զանտանելին ի քեզ բարձեալ բերելով պտուղ. զերկին իսկ միանգամայն և զմիջոցս լցեր զերկնի և զերկրի. որ յԻսրայէլն ազին ծաղկեցար, և քոյովդ պտղովք լցան ամենայն տիեզերք»¹³ պարբերությունները՝ մանրամասն անդրադառնալով յուրաքանչյուր բառին և արտահայտությունը¹⁴: Արևելցին կիրառել է մեկնողական գրականության մեջ տարածված է Հին և Նոր կտակարանների զուգորդման սկզբունքը՝ հիշատակելով հինկտակարանային իրադարձությունները և մարգարեներին: Առանձին արտահայտությունների մեկնաբանության համար նա վկայակոչում է Փիլոն Եբրայեցուն, Գրիգոր Նյուսացուն, Գրիգոր Աստվածաբանին և Դիոնիսիոս Արիսպագացուն: Հիշատակվում են նաև զրադաշտական կրոնի հիմնադիր Զրադաշտը (ընդ որում՝ գործածվում է անվան հունարեն «Ջորուաստրէս» տարբերակը) և Քսիսութրիոսը («Քսարաստրուստէսն» ձևով), որ Նոյի անունն է քաղդեերենով: Վարդան Արևելցին այս մեկնության մեջ արտահայտել է իր հայացքները մարդու, կենդանական աշխարհի և բնության վերաբերյալ: Ուստի՝ այն ուշագրավ է ոչ միայն զուտ աստվածաբանական, այլև հայ միջնադարյան բնագիտական մտքի ուսումնասիրման տեսանկյունից:

Բնագիրը հրատարակվում է Մաշտոցյան Մատենադարանի թիվ 4139 «Տո-

¹¹ Տե՛ս Ռ. Վարդանյան, *Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր)*, Եր., 1999, Եր., էջ 207-226:

¹² Տե՛ս Հ. Անասյան, *Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ.*, Բ. Ա, Եր., 1959, էջ LX:

¹³ Դավիթ Անյաղթ փիլիսոփայի *Մատենագրութիւնք*, էջ 17-18:

¹⁴ Բացառված չէ, որ Վարդան Արևելցին կարող էր մեկնած լինել «Բարձրացուցէք»-ի առավել ընդարձակ հատվածներ և միայն այս գոհաբանական դրվագը գետեղել իր խմբագրած «Տոնապատճառ»-ում՝ Խաչի տոնի խորհրդին համապատասխան:

նապատճառ»-ի հիման վրա, որն ընդօրինակվել է 1267 թ., Հաղպատում¹⁵: «Բարձրացուցէք»-ի նախադրույթունը, Գյուտ կաթողիկոսի և Դավիթ Անհաղթի նամակները¹⁶ նույնպես ընդրկել ենք սույն հրատարակության մեջ «Տոնապատճառ»-ում «Բարձրացուցէք»-ին առնչվող բնագրերի մասին ամբողջական պատկերացում տալու նպատակով:

343բ Ի տանի սրբոյ և փառաւոր Խաչին Քրիստոսի ի բանն Դաւթի, որ ասէ. «Աւհնեալ ես աստուածագառդ, քրիստոսապսակ փայտ սուրբ»

346ա [...] Ժամ է այսուհետեւ արհնութեան և ներբողինի խաչին պարապել, որ սիրելի է մեզ և ըղձալի այնպիսում առն ասացւած, որ է փառք ազգիս և պարծելի և սուրբ որդի Հայաստանեաց եկեղեցեաց¹⁷, Դաւիթ փիլիսոփաի ասացեալ, որ լիապէս գիտէ զտեսականն և գործնականն և զմասունս նոցա զԲԺ. (12)-ան, ի Հարք գաւառէ, ի Հերեթն գեղջէ: Աշակերտ սրբոյն Սահակա և Մեսրոպա, զոր և ասեն քերորդի գոլ Մաւսիսի Քերթողահարն, ի Կ. (60)-իցն, որ ընտրեցան՝ ուշեղք, փափկաձայնք և երկարոգիք և ամենայն առաքինութեամբ զարդարեալ: Որ յետ ՃԺԱ. (111) ամի սրբոյն Գրիգորի, գիւտի գրո ազգիս մերո ընտրեցան և շոգան յազգս և ի գաւառս ուսանել իմաստասիրութիւնս և արուեստախաւսութիւնս և առնել թարգմանութիւնս յԱղէքսանտրիա և յԱթէնս և յայլ գաւառս: Եւ որք ընդ նմա գնացին՝ Մամբրէ՛ եղբայր Մովսիսի, Մուշէ և Եղիշէ, Եգնակ և Արձան Արծրունի և Ալան: Եւ ի դառնալն, զի բազում ժամանակ էին անցե[ա]լ և յոլով անցք անցեալ ընդ երկիրս Հայոց՝ ընկենուլն զսուրբն Սահակ յաթոռոյն և սպանանելն Ա/346բ/ րտաշիրին ի սաղրելո իշխանացն և Սուրմակա քահանային և յասորոց առաջնորդ կացուցանելն: Եվ յետ ԻԸ. (28) ամի գիւտի գիւտի գրոյն կոտորումն սրբոց Վարդանացն և բաժանումն հայրապետութեանն յերկուս՝ Յոհան Մանդակունի ի կողմանս Պարսից կաթողիկոս, և Գիւտ՝ ի կողմանս Յունաց, յաշակերտաց սրբոց քահանայից:

¹⁵ Ձեռագիրս ունի ուղղագրական առանձնահատկություններ. «ա» և «ո» տառերին հաջորդող «յ»-ն լինի բառավերջում կամ բառամիջում, սովորաբար բացակայում է, և ստացական -դ հոդի փոխարեն գրված է -տ: Ուղագրավ է նաև Սողոմոն անվան «Սաղոմոն» ձևը:

¹⁶ Տե՛ս Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, էջ 5-8:

¹⁷ Այս նախադասությունը հրատարակության մեջ բացակայում է, ինչի հետևանքով իմաստը ճիշտ չի հասկացվում և շփոթի տեղիք է տալիս (օրինակ՝ ֆրանսերեն այն թարգմանվել է «Paroles du philosophe David, qui connaît complètement...», այսինքն՝ «Դավիթ փիլիսոփայի խոսքերը, որ լիապես գիտի...» (տե՛ս J.-P. Mahé, «David l'Invincible dans la tradition arménienne», I. Hadot (ed.), *Simplicius, Commentaire sur les Catégories, Leiden, New York, Kobenhavn, Koln*, p. 191, V. Calzolari, «Un philosophe “Invincible”: Le néoplatonicien David», *Illuminations d'Arménie. Art du livre et de la pierre dans l'Arménie Ancienne et Médiévale*, sous la direction de Calzolari V., Er., 2007, p. 196.):

Եւ եկեալ էին արք ոմանք ի նահանգէն Անտիոքա, ի գեղջէն, որ կոչի Աւշին, որոց անուանքն Կոստանդին, Պետրոս և Թէոդորէ՝ խարազնագգեստք, բոկագնացք, պահողք, կեղծաւորք: Որոց ծունկք և ճակատք տեռեալք՝ իբրև զուղտո՛ւ ի ցոյց մարդկան: Որք ասէին ոչ գոլ զՄարիամ Աստուածածին, և ոչ զԽաչն աստուածախաչ, այլ գողի պատժարան: Արդ, իբրև լուա Գիւտ զգալն Դաւթի և զընկերաց նորա, բերկրեցաւ և մխիթարեցաւ յոգի, գրեաց թուղթ առ Դաւիթ, որ ունէր աւրինակ զայս. «Երկնաւորին ցանկացեալ մեծութեան գտաւ զգանձի և աստուածաին լրութեանն յուսոյն, որ ձրգէր, հասանէր ի տիրապէս տենչումն ի գերակա և ի պատարուն պայմանն գտեալ և ծածկեալ, բացայայտեալ բոց բարեաց բարետրապէս բարուց քոց, զոր ի վարժ վաճառի վարդապետութեանն քում, խնդրելի է մեզ՝ խուզողացս խաւսել խորհրդով ի Խաչն Քրիստոսի: Զնորին երախտեացն հատուցանել, որ առ ի մէնջ գոհութիւն, փրկելոցս փրկաւետ փառաց փեսաին: Զի պաշտելի է մեզ և պատուելի և պանծալի ըստ Պաւղոսի, պարծելի պատանեկացս պսակն Յիսուսի և թագ նորո Սիրոնի: Զի բարձցի հայհոյութիւն հերեսիտացն հերձաւծոյն և խլեսցի ազարակաց փուշք, փաստ բանք և որոմն սատանաական սերման, որք ի մարդ յուսան և ոչ յԱստուած: Գիւտ՝ գագաշեալ գերեզմանի գարշապար և մահու մերձաւոր, դրուատ հայցեմ, Հայոց հաւտի հովապետ և վերադիտող տանս Արշակունեաց, ընկա՛լ թուղթս թախանձանաց»:

Ապա առնէ նմա անդրէն անդրադարձ /347ա/ պատասխանի. «Զառ ի յաստուածուատ պատուեալ զերիցս երջանկի, զմեծի հայրապետի և զաթոռակալի սրբոյն Գրիգորի, զՀայոց Մեծաց վերադիտողի, զաստուածահրաման խնդիր հարկապահանջութեան եկեղեցական գործառնութեան, զոր հրամայեցեր կրօնութեանս մերում գրով դրոշմել ի քարտիսի մատենագրութեան, զի կացցէ և մնացցէ, յարձանի անշնջելի և անջրելի յիշատակ զկնի ազգաց եկելոց: Զոր ոչ այլազգաբար թուի ինձ, քան թէ իշխանութեանս քում ըստ գերազանցութեան պատույ զհարկեցուցչի և զանհնարին հրամանաց ծանրութիւն: Սակս որո սարսեալ սարսափիմ և երկեւղ ոչ դուզնաքեա, վասն զի գտանի քան զկարն մեր գերազանց խնդիրտ: Եւ զհարկ ի վերայ կայ Աւետարանել հնազանդութեամբ, զի մի վայն վիճակեսցի: Սակայն սատարեսցի սրբամատոյց աղոթքս Զեր սարտուցելոցս, զի Բանն Աստուած տացէ բան բանի մերոյ մասունս և հոգին հմտութեան հանձարո խորհել խորհրդով և խաւսել»:

Եղև այս ի ժամանակս մարզպանութեան և ստրատելութեան Վահանա Մագնոսի՝ որդո Վարդանա կամ որպէս ասեն՝ եղբար, փորձողքն և գիտողք: Սուտ ասեն զայլ պատճառսն՝ յԱթէնս և ի Բիւզանդիա և կամ յԵրուսաղէմ և կամ յորժամ ի Պարսից դարձաւ Խաչն ասեն, թէ ընդառաջ գնաց և խաւսեցաւ զայս ի պատիւ Խաչին: Իսկ այս առանց կարծեաց է:

Դաւիթ — ինքնաբաւ թարգմանի և կամ սիրելի և կամ կղզո պտուղ: Փիլիսոփաի — որպէս ասացաւ յառաջագոյն: Ներբողեան — ոմանք ինքնասացութիւն

ասեն և կէսք գովասանութիւն, իսկ այլք՝ խորախոսութիւն: Բայց Գրիգոր Նեւազի բերկրումն անուանէ ի ճառին, որ առ սուրբ հայրն Եփրեմ: Արդ, եթէ «Քրիստոս ծնեալ» ճառն պատշաճ է ի Մընդեան աւուրն, ապա այսաւր կարի պատեհագոյն է աստի խաւել, որ շէ պակաս, քան զայն ի զորութենէ մտաց և յաւգուտ լսաւդացն և ի պայծառութիւն տ/347բ/աւնական աւուրս, զոր ողորմութեամբն Աստուծոյ բերան եղեալ աստուածընգալ մտացն Դաւթի: Ասասցուք ընդ նմա այսպէս. Աւրհնեա՛լ ես աստուածազարդ եւ քրիստոսապսակ փայտ սուրբ¹⁸ – Արդ, արհնութիւն է գոհութիւն Աստուծոյ՝ կամ առեալ պարգևաց և կամ ակն ունեւեացն: Ըստ Դավթա. «Աւրհնելով կարգացի առ Տէր և ի թշնամեաց իմոց ապրեցոյց զիս»¹⁹: Եվ դարձեալ. «Աւրհնեցից զՏէր յամենայն ժամ»²⁰: Եվ կամ յախթական է, յորժամ Աստուծով յաղթութիւն հաստատի՝ որպէս Մովսէս ի կործանանն փարաւոնի ասէր. «Աւրհնեսցուք զՏէր, զի փառաք է փառաւորեալ»²¹: Եվ Դեբովրա Բարակաւ հանդերձ ի կործանմանն Սիսարա զաւրավարին Յաբեհա²²: Եւ ըստ Դիոնէսեա՝ յայտնաբանութիւն ասի արհնութիւնն, յորժամ յայտնի զաւրութիւնն Աստուծոյ, հրաշս ինչ գործելով²³: Ըստ Եսայայ, որ ասէ. «Աւրհնեցէք զԱստուած յարհնութիւն նոր, զի իշխանութիւն նորա ի բարձունս եւ անուն նորա փառաւորեալ է ի ծագաց մինչ ի ծագս երկրի»²⁴: Այսպէս, սուրբս այս տեսեալ զանթիւ պարգևաց մեզ առիթն եղեալ և զյուսացեալն, տա արհնութիւն ահաւոր Նշանիս: Եվ դարձեալ ի վերա կործանմանն Սիսարա իմանալոյն սատանաի: Յաղթական արհնութիւն երգ է, որ Աստուծոյ վայել է յայտարարեալ, թէ աստուածունակ է և քրիստոսաշնորհ: Եվ անճառ ողորմութեանն Աստուծոյ զայս միայն ունիմք հատուցումն: Դարձեալ սովաւ յայտնեցաւ խորհուրդն, որ ծածուկ էր յաւատոցն եւ յազգացն: Աստուածազարդ – հայրազարդ, զի Հայր զարդարեաց զսա ըստ մեծին Յովհանու: Քրիստոսապսակ ասէ. պսակ թագաւորաց յոսկոտ եւ յականց պատուականաց յարմարի, իսկ Նշանս փրկութեան մերո զՔրիստոս ունի պսակ՝ զԱրարիչն ամենայն գոութեանց: Փայտ սուրբ – որ է առաքինութեան նշանակ: Եվ ըստ Փիլոնի Բ.ու եւ առաքինութիւն փայտի՝ քաջուղեշ և պտղեղ գոլ, այլն՝ ան-

¹⁸ «Բարձրացուցից»-ից մեջբերված հատվածները թավ տառատեսակով են:

¹⁹ Սաղմ. Ժէ 4:

²⁰ Սաղմ. ԼԳ 2:

²¹ Ելից ԺԵ 1, 21:

²² Հմմտ. Դաւ. Ե 1-3:

²³ Հմմտ. Գիոնեսիոսի Արիսպագացոյ Եպիսկոպոսի Աթենացոց առ Տիմոթէոս Եպիսկոպոս Եփեսացոց Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց, *The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite*, ed. By **R. W. Thomson** (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 488, Scriprores Armeniaci, tomus 17), Lovanii, 1987, էջ 4-6:

²⁴ Եսայի ԽԲ 10:

փուռն, և այս բնութեամբ են²⁵: է, որ և մակստացական՝ քերեալն և յղկեալն և քան /348/ դակեալն ի գործ ինչ պիտանի: Իսկ հիահրաշ Նշանս ոչ ի բնէ և ոչ ի ճարտարաց առաքինանա, այլ Աստուծով ճոխանա, որ ըստ Ամբակումա. «Ծածկեցին զերկինս առաքինութիւնք նորա»²⁶: **Քրիստոսապասկ** – Ինքեամբ զիսաչն պսակեաց և խաչին զեկեղեցի համաժողովեաց: Որպէս և այժմ երևի ի գագաթունս եկեղեցեաց զգալապէս՝ որպէս զպայծառացեալ պսակ արքունական: **Փայտ ասէ**. բնական է այս անուն հատեալ յարմատոյն, իսկ սեռականն չէ յայտնի, թէպէտ և կիպարի կարծի: Իսկ ձևացեալ եղև խաչ գործի մահու, իսկ զաստուածընկալեալ և իմացական պատուով պատուեալ եղև աստուածախաչ: **Փայտ սուրբ** – զայս սէրոբէքն Աստուծոյ աղաղակէին և նոյնք այժմ աներևութաբար և անլուր ի մէնջ զեռահիւսակ սրբասացութիւնն երգեն վեր ելելոյն Աստուծոյ՝ որպէս կարգեցաւ յեփեսոս և ի Հայս հաստատեցաւ: **Սուրբ** – զի որ սրբութիւն արար մեղաց մերոց քև ի քեզ է: **Որ միայն յանշունչս և ի շնչաւորս, ի կենդանս և յանկենդանս անճառելո հասեր շնորհի** – Յիրաւի ասէ՛ ասացաք զքեզ արհնութեան արժանի, որ Աստուծոյ է սեփական: Զի ահա ընդ ամենայն գոյութիւնս համեմատեալ գեր ի վերո գտանիս: Արդ, Գ (3) սեռք են շնչաւորաց ըստ առաջնո արարչութեանն: Առաջին՝ շնչաբոյս տունկք, որ ունին սերմնական, բուսական և աճեցական զարուրութիւն: Երկրորդ՝ գազանք և անասունք, որք ունին զտնկոյն և աւելի զաճեցականն և զգասական զարուրութիւն: Եւ դարձեալ՝ անշունչք եւ շնչաւորք, դալարաբոյսք և շարժուն զեռուն մանունք, ճանճք և պիծակք, որ լինելութիւն և շարժումն ունին և ընթացք և կենդանի են, վասն զի փոքոյ են հաղորդք կենաց: **Կենդանս և յանկենդանս** – կենդանի՝ հրեշտակք, դևք, մարդիք և որք ի ծով և ի ցամաքի են և յաւդս: Դարձեալ՝ կենդան և անկենդան՝ արև և լուսին և աստեղք և լոյսք, որք գնան իբրև զկենդանիս, և շարժումն ունին և շունին մասն կենաց ինչ: Դարձեալ ծով և գետք և աղբերք /348բ/, որք գնան և շարժին հրամանաւ Արարչին, և կենդանածինք են և են անշունչք և անկենդանք: Դարձեալ՝ աւդ և հողմք, որ յաւդո և յերկրէ և ի ծովէ ելանեն և ձայնի ազդումն տան և շարժեն զանշարժս և զշարժականս: Եվ փայլատակմունք և ցոլմունք և բորբոքմունք հրո, զի և սոքա ըստ բնական զարուրութեանն շարժականք են և անկենդանք: Նաև ի մեզ և յանասունսդ անշունչ և անկենդան է ոսկերք և մազ և եղունգք և ճարպ և կենդանի և շնչաւոր գործականքն ասացեալ սգաութիւնք: **Անճառելո հասեալ շնորհի փառաւորեցար** – Շնորհի Աստուծոյ հասեալ են ամենայն արարածք, այլ ճառելիք են: Վասն զի ճառեցին վասն երկրի Պտղոմեանքն և եգիպտացիքն, և վասն լուսաւորացիք՝

²⁵ Հմմտ. Փիլոնի Եբրայեցոյ Մնացորդք ի Հայս, որ են մեկնութիւն Մննդոց, եւ Ելից. Ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս, աշխատ. Հ. Մ. Աւգերեանց, Վեմետիկ, 1826, էջ 6:

²⁶ Ամբակ. Գ 4:

քաղղէացիքն, Զորուաստրէս և Քսարաստրուստէսն ասաց<աց>եալքն: Եվ վասն փայտի Սաղոմոն պատմեաց մինչև ի բոյս որմոյն և վասն ծովու՝ Յունան մարգարէ և Աղէկասնդրոս արքա²⁷: Իսկ զքոյղ շնորհ տեսեալ ըստ կարի Պաւղոս ասաց. «Մ խորք մեծութեան իմաստութեան»²⁸: Եվ Դաւիթ ասէ. «Մ խոսեսցի զզարութիւնս Տեառն և զարութիւն սիրո Աստուծոյ առ մարդիք դու միայն ես»²⁹: Քո էին ստուգապէս անճառելիքն, զոր լուաւ երկիրք: Զի ընկերքն քո փայտքն շնորհ ունին կա՛մ ի հասակն կա՛մ ի գոյնն կա՛մ յողորկութիւնն և կա՛մ ի սաղարթն, կա՛մ ի ծաղիկն և կա՛մ ի պտուղն: Եւ դարձեալ ի բժշկութիւնս, զորս ունին յարմատս ի կեղևս և կամ ի խիժս: Մարմնականք և անցաւոր ունին զպէտսն և ժամանակեայք են, իսկ քո շնորհիւտ արհնեաց զմեզ Արարիչն ամենայն հոգևոր արհնութեամբ յերկնաւորս: Իսկ շնորհ անւանի, զի ձրի է և պարզ և դու չեղեր ինչ նպաստ: Եվ դարձեալ շնորհ, ըստ Աստուածաբանի, որպէս պարտականաց, որք էաք մեք մեղաւք պարտական մահու և դժխոց, զի ամենայն անձն, որ մեղիցէ, նոյն և մեռցի և ի տոռունս մեղաց իւրոց կապեսցի: Քև եբարձ զպ /349ա/ արտիս մեր, զմեղս և զմեղացն զմահն: Փառաւորեցար վասն անճառելի շնորհացն և փառացն Քրիստոսի, որ ի քեզ: Զէիր, ասէ, ի բնութենէ փառաւոր, այլ եղեր առաջին փայտն անարգութեան եղև պատճառ և անփառաւոր ցուցաւ: Փառաւոր ասէ, որպէս լուսաւոր կամ թագաւոր, որք լոյս ունիցին և կամ թագ: Այսպէս փառք ունիս դու, զի փառաւորեալն յամենայն յաւիտեանց և կամ թէ Քրիստոս զքեզ կոչեաց փառք, Հայր փառաւորեաց զանուն քո և զՈրդի: Զքեզ արհնէին քէրոբէքն՝ ասելով. «Արհնեա՛լ են փառքն Տեառն ի տեղուշ իւրում»³⁰, ուր և կանգնեալ է ի փրկութիւն աշխարհի և ի պահպանութիւն: Վասն որո ի բանաւոր և ի մտաւոր կենդանեաց զկամաւորն պահանջէս զերկրպագութիւնն] – Ոմանք մտաւոր գորեշտակս և բանաւոր զմարդիք ասացին: Այլ հրեշտակք բոլորովին միտք են, շասին մտաւորք և նոքա չունին կազմաւած մարմնո խաղաղական և կրկնական: Սակայն, էութիւն նոցա խոնարհի յերկրպագութիւն հաշին և ի փառս: Այլ մտաւոր և բանաւոր կենդանի մարդս է ի սգաական մարմնի և երկրպագու յարինել անդամաւք: Այլ տեսանելի է և այս, զի բանաւոր և մտաւոր պատկեր այն ասի Աստուծոյ, որ խոհական մտաւք և լուսաւոր խորհրդով հաւել կարէ ի փառս հաշին: Եւ կուրամիտք են առ որս ոչ ծագեաց լուսաւորութիւն Աւետարանի փառացն Քրիստոսի՝ հաւասար անբանից և մարդագէմ գազան տիրապէս է զնա ասել: Զայնպիսին որպէս և առ Պաւղոս լալով ասել զթշնամեաց հաշին Քրիստոսի³¹: Զկամաւորն պահանջես

²⁷ Հմմտ. Առակ. Գ 18, Յովն. Ա 1-16:

²⁸ Հռովմ., ԺԱ 33:

²⁹ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, էջ 12:

³⁰ Եզեկ. Գ 12:

³¹ Հմմտ. Փիլիպ. Գ 18:

զերկրպագութիւն – Զի յանձնիշխանազգաց կամաւորն պահանջէ զառաքինութիւն յաւտարութեամբ սրտի: Զի նեւթ փրկութեանն զկամաւորն ասէ և ոչ ի հարկէ, կեղծաւք և առերեսս և կամ բռնութեամբ՝ որպէս ի կատարածի լինելոց է հրէից և հեթանոսաց զակամա: Այլ աստ կամաւոր /349բ/ ասէ, զի ակամայն անընդունելի է՝ որպէս Կանենին և հրէիցն. «Կոխել զգաւիթս իմ մի՛ յաճախէք»³²: Եւ «Ընդէ՞ր բերես ինձ խունկս ի Սաբա և կինամոմոնս ի հեռաստանէ և ոչ ընդունիմ զտարեկանս ձեր, զի անընդունելիք և ակամայք են»³³: Արդարութիւն և երկրպագութիւն, որ Աստուծոյ վայել է, սմա հրամաէ տալ՝ յայտարարեալ, թէ աստուածափառ և քրիստոսապատիւ է: Եվ թէ կամիս, յիշեա՛ զկարկինոսն. որ ընկէնու զքարն ի խեփորն ոստրէոսին, ուստի գո[յ]անա մարգարիտն ի փայլատականէ և յանձրեաց, ի կենդանի շնչաւոր զեռնո և յանկենդան և յանշունչ անձրեաց և փայլատականէ³⁴: **Աւրհնեա՛լ ես քրիստոսապսակեալ փայտ սուրբ, որ ի յերկրի բուսանելով զ[երագոյն երկնից կամարացն ծայր արձակեցար]** – Յերկրէ բուսար, ասէ, ընդ այլ տունկսն, սակայն յեկեղեցւոք արմատացար, ի խոր զարմատս արձակեալ ի սիրտ հաւատացելոց և ծայր արձակեալ բարձրացար, քան զամենայն արարածս: **Զանտանելին ի քեզ բարձեալ բերելով** – Անտանելի զաստուածութիւնն, ասէ, բովանդակեալ ի մարմնի պատարագեցաւ ի քեզ՝ բերելով պտուղ: Որքան բարձրացաւ գագաթն ծայրի քո, ամենաւրհնեալ սուրբ Նշա՛ն, որ հասեր ի ներքին կողմն վարագուրին, զամենայն արարածս արտաքո թողեր, և պտուղ զնա բերեր, որ բանա զձեռն և լցուցանէ զարարածս: **Զերկին իսկ միանգամայն և զմիջոցս լցեր** – Արև և լուսին, յորժամ ի ներքին կիսագնդին են ի վերինն ոչ են և յորժամ ի վերինն, ի ներքինն՝ ոչ: Իսկ աստուածաին բնութիւնն, որ ի քեզ և զարութիւն քո առհասարակ զամենայն լնու և զնա ոչ ոք տանի: **Զերկին և զերկիր ես լնում** – Զի անբաւ և անփոփոխ բնութիւն ունի: Եւ որ զամենայն լնու լիով ի քեզ է, ասէ, և քեւ արար փրկութիւն ի ծագս երկրի, և յանուն նորա ամենայն ծունր կրկնեսցի: **Զմիջոցս լցեր, ասէ. զմիջնատարերքս, ասէ և՛ զաւղ և՛ զջուր, որո երկինք աթոռ են և երկիրս՝ պատուանդան: Որ յԻսրայէլի ազինն ծաղկեցար** – Զբան երկնքին առնու և /350ա/ բխեսցէ գաւազանն յարմատ և դարձեալ ծաղկեսցի Իսրայէլ և լցցին տիեզերք պտղով նորա: Եւ ի յարինակ քո ծաղկեցաւ գաւա-

³² Եսայի Ա. 12:

³³ Հմմտ. Երեմ. Զ. 20:

³⁴ Հմմտ. «Քարոյախաս»-ի մի ուշ հավելվածով. «Աստակոսն խեցեմորք է. յորժամ զփորն բանայ ի թիկանց կուտէ. անձրև անդր անկանի. մարգարիտ գոյանայ յարինակ անսերմ յղութեան կուսին», ինչպես նաև՝ Վանական Վարդապետի «Հարցմունք եւ պատասխանիք»-ի հետևյալ հատվածով. «հարց. աստակոսն, պատասխանի. խեցեմորքն. Յորժամ զխեփորն բանայ ի թիկանց կուտէ անձրև որ ի փայլատակելն անդ անկանի. Մարգարիտ գոյանայ յարինակ անսերմ յղութեան կուսին» (տե՛ս *Physiologus. The Greek and Armenian Versions with a Study of Translation Technique* by G. Muradyan, Peeters, 2005, էջ 203, ծան. 58):

զանն Ահարոնիի քահանայութիւն և թագաւորութիւն, նշանակ, որ և ի Տէր մեր կատարի: Եւ դարձեալ ի Պաղեստինացոց աշխարհին ծնանի, ի Բեդղաեմ և ի Նազարեթ սնաւ, որ թարգմանի ծաղկեա: Եւ քոով պտղով լցան տիեզերք – Առաքեալքն քո պտուղ են, և նշանաւք և արուեստիւք քո զաւրութեամբս արարելովք, լցին զտիեզերս: Եւ դարձեալ՝ հայրապետք և քահանայք և վարդապետք, միանձունք խաչակիրք և մարտիրոսք պսակաւորք և բոլոր հաւատացեալք, որք ի ճակատս դրոշմեն զքեզ և քրիստոսեանք կոչին, պտուղք են քո: Եւ այսպիսի պտղով լի են տիեզերք[...]:

Армине Мелконян
Нововыявленный Комментарий Вардана Аревелци к
“Бардзрауцеку” Давида Непобедимого

Средневековые армянские авторы свидетельствуют, что Давид Непобедимый написал "Панегирик Богоприимному Святому Кресту" (*Бардзрауцеку*) по заказу Католикоса Гюта Араезаца (461-478), против проникшего в Армению несторианства. "Книга толкований церковных праздников" ("Тонапатчар") содержит переписку Гюта и Давида и Пролог, а также краткий комментарий к "Панегирику". Мы считаем, что автором комментария к "Панегирику" в "Тонапатчаре" является Вардан Аревелци, на основании следующих фактов: а. он является редактором "Тонапатчара", который содержит интересующий нас текст, б. в рукописях, содержащих информацию о средневековых авторах, в списке трудов Вардана Аревелци упоминается некий комментарий к "Панегирику". Комментарий интересен не только с богословской точки зрения, но и как образец армянской средневековой естественнонаучной мысли. Текст издается по рукописи Матенадарана N 4139, переписанной в 1267 г. в Ахпате. Предваряющие его Пролог к Панегирику и переписка Давида Непобедимого и Католикоса Гюта (опубликованные с некоторыми различиями в Венеции в 1833 г. и в 1932 г.), также включены в это издание, для общего представления о текстах, связанных с "Панегириком", в "Тонапатчаре".

Armine Melkomyan
Newly found Commentary on David the Invincible's *Barjrac'uc'ēk'*
by Vardan Arewelci

Armenian medieval authors testify, that David the Invincible wrote the "Encomium on the Theoleptic Holy Cross" (*Barjrac'uc'ēk'*) by the

order of Catholicos Giwt I Arahezac‘i (461-478), against the Nestorians who had penetrated into Armenia. The correspondence between Giwt and David, the Prologue of the *Encomium*, as well as a short Commentary on it are included in the “Book of Causes of Church Feasts” (*Տօնապատճառ*). I suggest Vardan Arewelc‘i as the author of the Commentary on the *Encomium* in the *Tōnapatčar’*, taking into consideration the following arguments: a. the text is found in the *Tōnapatčar’* edited by him, b. in the manuscripts containing information on medieval authors, a Commentary on the *Encomium* is mentioned in the list of the writings of Vardan Arewelc‘i. This Commentary is interesting from the theological point of view, but also as a specimen of Armenian medieval natural scientific thought. The current edition is based on MS M4139, copied in 1267 in Halbat. The antecedent Prologue to the *Encomium*, and the letters by David the Invincible and Catholicos Giwt (published with some differences in Venice in 1833 and in 1932) are also included in this edition, in order to give a general notion on the texts in the *Tōnapatčar’*, pertaining to the *Encomium*.